Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

78 (09)
C - 16

[illegible]

տպ. 247.

78(09)
Փ-18

[illegible]

258 | 26/IV

78(09)
Շ-16
780
55-ՇԱ

# ՈՒՂԵՑՈՅՑ
# ՏԱՐՐԱԿԱՆ ՁԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ

(ՎԵՑ ԴԱՍ)

ՅԱՐՄԱՐԵՑՐԱԾ ԽՄԲԱՊԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԿԱԶՄԵՑ ՇԱՀԱՆ-ՍԻՄՈՆ

ՄՈՍԿՈՒԱ.
ՏՊԱՐԱՆ Գ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ.
1902.

12 JUL 2013
4399
78(09)
Ղ-16
29 OCT 2010
ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ Հ. Հ. ԳՐԱԴԱՐԱՆ
10474-57

Ի ՅԻՇԱՏԱԿ

# ԽԱՉԱՏՈՒՐ ԿԱՐԱ-ՄՈՒՐՋԱՅԻ,

*որն այնքան մեծ եռանդով, պարզ ու հեշտ ձեւերով*
*տարածում էր մեր մէջ խմբական երգեցողութիւնը,*

ՆՈՒԻՐՈՒՄ Է

ԿԱԶՄՈՂԸ։

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ
Հ. Հ.
ԳՐԱԴԱՐԱՆ



# ԱՌԱՋԻՆ ԽՕՍՔ

Մեր մէջ ընդհանրացած է այն կարծիքը, թէ ձայնագրութիւն իմանալը (նոտաչի լինել) մի երեւելի իմաստութիւն է և թէ՝ ներդաշնակ երգեցիկ խումբ պատրաստելը — շատ դժուար գործ։ Այս կարծիքն առաջ է եկել մեր երգեցողութեան ուսուցիչների մեծամասնութեան անկարողութիւնից, առարկայիս վերաբերեալ հեշտ ձեռնարկների բացակայութիւնից և, վերջապէս, եկեղեցական փողերի այս մասին արած անտեղի խնայողութիւնից։

Դեռ խմբապետներ չպատրաստած, ուսուցանելու կանոնաւոր ձեռնարկներ չհրատարակած, եւրոպական

ձայնագրերի մասին պարտ ու պատշաճ տեղեկութիւն չստացած, յանկարծ մեր երգեցողութեան ուսուցիչների առջեն է դրւում պ. Մ. Եկմալեանի ներդաշնակած պատարագի արարողութեան հաստակող պարտիտուրան։ Ինքը՝ ներդաշնակողը գանգատւում էր, որ իւր հրատարակութիւնը Եւրոպայից աւելի պահանջողներ, առնողներ կան, քան թէ Կովկասից։ Այդպէս էլ սպասելի էր. մենք դեռ անպատրաստ ենք, և եթէ մեր մէջ օտար ուսումնարաններից դուրս եկած հատ ու կէնտ եւրոպական ձայնագրութիւն իմացողներ են պատահում, դրանք էլ Հայոց եկեղեցու ժամակարգութեանց մասին հասկացողութիւն չունին։ Այս պատճառներով շատ եկեղեցիներ զրկուած են միում կանոնաւոր խմբական երգեցողութիւնից, որի անհրաժեշտութիւնն զգալի է։

Խմբական երգեցողութեան գործը փոքր ի շատէ արագացնելու, հեշտացնելու նպատակով հրատարակւում է սոյն տետրակը։ Խմբապետները պէտք է որ կարճ միջոցում կարողանան անձայնագրագէտ աշակերտներին ուսուցանել ձայնագրութեան ամենատարրական ու ամենաէական մասը և նրանցից կազմել երգեցիկ խմբեր։

Առհասարակ եւրոպական կամ հայկական ձայնագրութիւն սովորողները երկար տարիների աշխատանքից յետոյ՝ հազիւ կարողանում են թղթից նոտերը կարդալ (երգել), իսկ ձայնագրել՝ շատ քչերին է յաջողւում, այնքան դժուար է այդ սիստեմի ձայնագրութիւնը։



Տարրական ձայնագրութեան ուսուցանելու ամենահեշտ միջոցը թուանշանական սիստեմն է*)։ Եօթը թիւ ամենքն էլ կարող են մտները պահել, ամենքն էլ կարող են գրել, ամենք էլ կարող են ձայնատիճանների բարձրութիւնն ու ցածութիւնը խկոյն և որոշ նկատել։ Այս էլ պէտք է իմանալ, որ ձայնագրութեան սկզբնական ուղիղ ըմբռնումը՝ աշակերտին կընպաստէ այնուհետև եւրոպական կամ հայկական ձայնագրութեանց գաղտնիքն հեշտութեամբ հասկանալու և իւրացնելու։

ՁԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ։ Ինչպէս որ իւրաքանչիւր մաթեմատիքական առարկայ կազմուած է տասն հիմնական թուերից (1 2 3 4 5 6 7 8 9 0), ինչպէս որ իւրաքանչիւր գեղանկար եօթն հիմնական գոյների (կարմիր, նարնջի, դեղին, կանաչ, երկնագոյն, կապոյտ, մանիշակագոյն) զանազանակերպ միաւորութիւնից է առաջ գալիս,—այնպէս էլ իւրաքանչիւր երգ, իւրաքանչիւր երաժշտութիւն յօրինուած է եօթն հիմնական ձայների վրայ՝ դօ, ռէ, մի, ֆա, սօլ, լա**), սի, կամ կամենաք անուանեցէք ֆօ, է, վէ, բէ, խօ, նէ, ղա — այդ միևնոյն է, անունները նշանակութիւն չունին։

---

*) Այդ սիստեմը (Էմիլ Շևէ) վաղուց ընդունուած է ռուսաց մանկավարժական աշխարհում, որից բաւական քաղուածքներ կան տետրակում։

**) Սօլ և լ'ա պէտք է փափուկ հնչել։

Արդ, եթէ ուշադրութեան առնենք այն հանգամանքը, որ հիմնական ձայները նոյն են (որովհետև 8-րդ ձայնը առաջինի կրկնութիւնն է, 9-րդը՝ երկրորդի, 10-րդը՝ երրորդի և այլն), ապա ուրեմն՝ ձայնագրութիւն սովորելն այնչափ էլ դժուար չպէտք է երևայ: Մեր այբբենարաններում 36-ից աւելի գրեր, հնչիւններ կան (մեծատառ, փոքրատառ, տպագիր, ձեռագիր), որ անգրագէտ աշակերտներին ընդամենը 5—6 շաբաթում ենք սովորեցնում. այս տեսակէտից դատելով՝ ձայնանիշներ սովորեցնելը 5—6 օրից աւելի չպէտք է տևի:

Ձայնագրութեան ուսուցումը գրագիտութեան պէս կարելի է պարզեցնել, կրճատել ու հեշտացնել, այստեղ էլ ընդունելով այն ուղիղ մեթոդը, որն այնքան հեշտացրել է գրագիտութեան ուսուցումը:

Գրագիտութեան մէջ յայտնի են ուսուցման երկու ձև, երկու մեթոդ — համադրական և վերլուծական, նոյնը պէտք է լինի նաև ձայնագրութեան համար:

Համադրական եղանակով աշակերտները նախ սովորում են առանձին ձայնանիշները ելևէջի ձևով և ապա անցնում են անվերջ և երբեմն էլ անիմաստ ու ձանձրալի վարժութիւններ. շատ ուշ միայն սկսում են սովորել ձայնագրած երգեր, աղօթքներ և այլն:

Վերլուծական եղանակով գործը բոլորովին հակառակ ուղղութեամբ է ընթանում. այս դէպքում աշակերտները նախ լսողութեամբ, բերանացի սովո-



րում են մի շատպարզ երգ *): Անձայնագրագէտ աշակերտներն սկզբում այդ երգն ընդունում են իբրև մի ամբողջութիւն՝ առանց ըմբռնելու նրա մէջ եղած տարրերը (ձայնաստիճանները) և ապա ուսուցչի առաջնորդութեամբ այդ ամբողջութիւնը վերլուծում են առանձին ձայնաստիճանների, որոնք զանազանւում են միմեանցից բարձրութեամբ, զօրեղութեամբ, ժամանակի տևողութեամբ և այլն, որով և գաղափար են կազմում ձայնանիշների մասին:

Այս ձևով տետրումս գրուած է վեց դաս, որ անցնելիս շատ բծախնդիր չպէտք է լինել. բաւական է, որ նորուս-երգիչներն իմանան բանի էութիւնը, որից յետոյ պէտք է ուղղակի սկսել պատարագի արարողութեան հեշտ մասերը, ուր նրանք հետզհետէ կընտելանան թուանշանական ձայնանիշներով անսխալ երգելու: Սակայն, աշակերտներն իւրաքանչիւր դասի բացատրութիւնն հասկանալուց յետոյ, բերանացի և գիտակցօրէն պէտք է իմանան վերջերում գրուած կանոններն ամփոփ:

Խմբապետը կամ երգեցողութեան ուսուցիչը աշակերտների հետ սկզբնական բանաւոր վարժութիւններ կատարելուց յետոյ՝ դիմում է բուն նպատակին — ձայնագրութիւն սովորեցնելուն:

---

*) Գործի արագութեանը նպաստելու համար՝ այստեղ էլ կարելի է հիմնական ելևէջը (Դօ Մաժոր գամմա) սովորեցնել լսողութեամբ, երգել տալով ա կամ օ ձայնաւոր գրերով և կամ յարմարեցրած բառերով:

Վարժութիւնների ժամանակ պէտք է հետևել, որ աշակերտն **ա** երգելիս՝ բերանը լէքը և կոլոր բաց անէ, այնպէս որ բերանի ներսը դատարկ տարածութիւն շատ լինի.



**ա**

Լեզուն պէտք է գոգաձև ⌣ պառկած մնայ, իսկ ձայնը կրծքիցը բղխի:



## ԱՌԱՋԻՆ ԴԱՍ

ՁԱՅՆԱՆԻՇՆԵՐ ԿԱՄ ՆՈՏԵՐ: Երբ ուսուցիչն համոզուի, թէ աշակերտներն արդէն լաւութեամբ իւրացրել են հիմնական ելևէջի (գամմա-Մաժոր) եղանակը, կը յայտնի նրանց, թէ այժմ պէտք է նոտեր սովորեն և նոյն եղանակը նոտերով գրեն ու երգեն:

Աշակերտներից մէկը կ'սկսէ երգել յիշեալ ելևէջը **ա** ձայնաւորով, իսկ մի ուրիշը գրատախտակի վրայ կը գրէ երգած **ա**-երը (ա ա ա ա ա ա ա ա): Ապա ընդհանուրին հարց կը տրուի, թէ՝ արդեօք բոլոր **ա**-երը նո՞յն ձայնն են հանում: (Ոչ): Արդեօք այդ զանազան ձայներն էլ չի՞ կարելի գրատախտակի վրայ գրել:

Աշակերտներն անշուշտ գլխի կընկնեն, թէ բանն ինչումն է:

Այնուհետև պէտք է ուշադրութեամբ և ծանր երգել տալ ելևէջի չորս աստիճանը միայն (առաջին թեթրախորդ). այստեղ, ի հարկէ, ձայնի հետզհետէ

բարձրանալն ականջի համար բոլորովին մատչելի է, որը դիւրել տալու նպատակով ուսուցիչը՝ աշակերտների հաւանութեամբ՝ գծագրում է գրատախտակին.




Նայելով այն պատկերին՝ ուսուցչի ցոյց տուած ձայնաստիճանի համաձայն՝ աշակերտներն աստիճանաբար երգում են ցածից բարձր և ընդհակառակը: Ապա նոյն եղանակը երգում են ու գրում օ, ու, է, ի ձայնաւոր գրերով. խմբովին և առանձին-առանձին: Յետոյ ուսուցիչն է երգում, իսկ աշակերտները գուշակում են՝ ցածից բարձր է երգածը, թէ՞ բարձրից ցած և այլն: Այս աշխատութիւնն այնքան հետաքրքրութիւն կըպատճառէ նրանց, որ իրենց իմացած ամբողջ ելևէջն (ութը ձայնաստիճան) այժմ ինքեանք կարող են երգել ու գծագրել.






Ձայնաստիճանները չշփոթելու համար՝ ուսուցիչը պատուիրում է թուանշաններով որոշել.




Այս էլ երգելուց և թուանշանների վրայ լաւ վարժուելուց զկնի, ուսուցիչն առաջարկում է նոյն ելևէջը՝ յարմարութեան համար՝ թուանշաններով գրել մի ուղիղ գծի վրայ և այնպէս երգել.

1 2 3 4 5 6 7 8
ա ա ա ա ա ա ա ա

8 7 6 5 4 3 2 1
ա ա ա ա ա ա ա ա

Վերոգծեալ պատկերից երգիչներին արդէն յայտնի կըլինի, որ 1-ը ցոյց է տալիս առաջին ձայնաստիճանը, 2-ը՝ երկրորդ ձայնաստիճանը, 3-ը՝ երրորդ և այլն: Երգեցողութեան մէջ այդ թուանշանները կոչւում են ձայնանիշներ կամ նոտեր:

Նոտերի անունները սովորեցնել կամ չսովորեցնելն ուսուցչից է կախուած:

## Վարժութիւններ Ա. դասի.

| | | |
|---|---|---|
| 1 2 3 4 5 6 7 8 | (⁀) | 8 7 6 5 4 3 2 1 |
| 1 2 3 4 5 6 7 | | 7 6 5 4 3 2 1 |
| 1 2 3 4 5 6 | | 6 5 4 3 2 1 |
| 1 2 3 4 5 | | 5 4 3 2 1 |
| 1 2 3 4 | | 4 3 2 1 |
| 1 2 3 | | 3 2 1 |
| 1 2 | | 2 1 |

| | | |
|---|---|---|
| 8 7 6 5 4 3 2 1 | (⁀) | 1 2 3 4 5 6 7 8 |
| 8 7 6 5 4 3 2 | | 2 3 4 5 6 7 8 |
| 8 7 6 5 4 3 | | 3 4 5 6 7 8 |
| 8 7 6 5 4 | | 4 5 6 7 8 |
| 8 7 6 5 | | 5 6 7 8 |
| 8 7 6 | | 6 7 8 |
| 8 7 | | 7 8 |

Նոյն վարժութիւնների վերջի նոտերն հետևեալի հետ կապելով (չկրկնելով) երգել. 8⁀8, 7⁀7, 6⁀6 և այլն.

Նոյն վարժութիւնների միայն ծայրերի նոտերը երգել՝ 1 8, 1 7, 1 6, 1 5 կամ 8 7, 8 6, 8 5...

Նոյն վարժութիւններն ուղղահայեաց շարքերով երգել.

---

**Կանոն.**—Կարգով բարձրացող և իջնող նոտերի շարքը կոչւում է **գամմա** (gamma — ելևէջ) *)։

---

*) Դիտմամբ պէտք է եւրոպական անուններին (տերմիններին) առաւելութիւն տալ, որպէս զի գծային-սիստեմի ձայնագրութիւն սովորելիս՝ նոյն անուններն աշակերտներին դժուարութիւն չպատճառեն։



## ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍ

---

ԿՐԿՆՈՒՈՂ ՆՈՏԵՐ ԿԱՄ ՕԿՏԱՒՆԵՐ։ Սոյն դասի նպատակն յայտնելուց յետոյ՝ երգել տալ իմացած գամման։ Երգածը գրել տալ նոր սովորած նոտերով։ Նոտերին նայելով երգել նոյնը։ Ապա երգել տալ միայն 1 և 8 ձայնաստիճանները։ Հարց տալ, թէ ի՞նչ նմանութիւն կայ այդ երկու նոտերի մէջ։ — Նրանք նոյն ձայնն են հանում՝ այն տարբերութեամբ, որ մէկը հաստ է, տղամարդու ձայն է, իսկ միւսը՝ բարակ է, սուր է, կանացի ձայն է։

Աւելի ուղիղ ըմբռնել տալու համար, թող երգին ելևէջի գոնէ չորս աստիճանը՝ 1 2 3 4, ապա առաջարկել, որ նոյն եղանակը երգեն բարակ, կանացի ձայնով։ Այնուհետև յայտնել, թէ այդ բարակ ձայներն էլ նոյն թւանշաններով են գրւում, որովհետև նրանց բարձր (բարակ) կրկնութիւններն են, որ կոչւում են **օկտաւներ**։ Օկտաւներն հիմնական ձայներից որոշելու համար՝ **գլխին դնում են կէտեր** $\dot{1}$ $\dot{2}$ $\dot{3}$ $\dot{4}$

Ցոյց տալ պատկերի վրայ (եթէ հնարաւոր է՝ նաև դաշնամուրի վրայ), որ հիմնական ձայների կրկնութիւններն սկսւում են 8 ձայնաստիճանից.




Ցայանել, որ այսուհետև 8-րդ աստիճանի նոտը փոխանակ 8-ի, պէտք է գրել 1̇

1 2 3 4 5 6 7 1̇ (8)
(8) 1̇ 7 6 5 4 3 2 1

Այս հասկացնելուց յետոյ, երգել տալ նոյն ելևէջի վերին չորս աստիճանը 1̇ 7 6 5, ապա առաջարկել, որ նոյն եղանակն աւելի հաստ, ողամարդու ձայնով երգեն։ Նոր երգած ցած (հաստ) ձայներն էլ վերին նոտերի կրկնութիւններն են և գրւում են այդ խսկ թւանշաններով և նոյնպէս կոչւում են օկտաւներ։ Ցածի օկտաւներն էլ հիմնական նոտերից որոշելու համար՝ տակին դրւած են կէտեր 1 7̣ 6̣ 5̣



Ցոյց տալ պատկերի (դաշնամուրի) վրայ, որ ցածի նոտերն սկսւում են՝ հիմնականի 1 աստիճանից ներքև.




Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
10474-57

Վերջը հետաքրքրութեան համար, գրատախտակի վրայ գրել բոլոր այն նոտերը, որոնք արդէն յայտնի ու հասկանալի են աշակերտներին.

| ցած ձայներ | հիմնական ձայներ | բարձր ձայներ |
|---|---|---|
| 1̣ 2̣ 3̣ 4̣ 5̣ 6̣ 7̣ | 1 2 3 4 5 6 7 | 1̇ 2̇ 3̇ 4̇ 5̇ 6̇ 7̇ |
| փօ է վէ բէ խօ նէ պա | փօ է վէ բէ խօ նէ պա | փօ է վէ բէ խօ նէ պա |
| | դօ ռէ մի ֆա սօլ լա սի | |

---

Վարժութիւններ Բ դասի.

| | | | |
|---|---|---|---|
| 1̇ 1 1 1̇ | 7 7̣ 7̣ 7 | 6 6̣ 6̣ 6 | 5 5̣ 5̣ 5 |
| 1 1̇ 1̇ 1 | 2 2̇ 2̇ 2 | 3 3̇ 3̇ 3 | 4 4̇ 4̇ 4 |
| 1 2 3 4 | 1̇ 2̇ 3̇ 4̇ | 1̇ 7 6 5 | 1 7̣ 6̣ 5̣ |

1 2 3 4 5  5 4 3 2 1   1̇ 2̇ 3̇ 4̇ 5̇  5̇ 4̇ 3̇ 2̇ 1̇

5 6 7 1̇ 2̇  2̇ 1̇ 7 6 5   5̣ 6̣ 7̣ 1 2  2 1 7̣ 6̣ 5̣

*Այս կերպ աշակերտների լսողութիւնը վարժեցնել՝*

1) *Տուած որևէ նոտի բարձր օկտաւը գտնելու,*

2) *Տուած եղանակը օկտաւ բարձր երգելու և*

3) *Ընդհակառակը՝ տուած նոտի կամ եղանակի ցածի օկտաւները գուշակելու։*

*Ելևէջի մինչև* **4** *կամ* **5** *աստիճանը երկու խմբով միասին երգել տալ՝ բարձր և ցած օկտաւներով։*

*Հիմնական ելևէջի միայն հինգերորդ աստիճանի բարձր և ցած օկտաւը գտնել և ապա նոյն ձայները երեք խմբով միասին, միաժամանակ վերցնել* 5̣ 5 5̇ *)։

*Վարժեցնել նաև հետևեալ հարմոնիքական ձայներին.*

1 3 5 1̇ — 1̇ 5 3 1
2 4 6 2̇ — 2̇ 6 4 2
3 5 7 3̇ — 3̇ 7 5 3
4 6 1̇ 4̇ — 4̇ 1̇ 6 4
5̣ 7̣ 2 5 — 5 2 7̣ 5̣
6̣ 1 3 6 — 6 3 1 6̣

---

**Կանոն.—Հիմնական ձայները եօթն են՝ 1 2 3 4 5 6 7, Մնացածները նոյն ձայների բարձր (բարակ) և ցած (հաստ) կրկնութիւններն են, որոնք կոչւում են օկտաւներ** (octava — 8-**րդ աստիճան**)։

---

*) *Հասկանալի է, որ այդպիսի դէպքերում իւրաքանչիւր աշակերտ իւր կարողութեան համապատասխան նոտն է երգելու։*

## ԵՐՐՈՐԴ ԴԱՍ

---

ՏԵՒՈՂՈՒԹԵԱՆ ՉԱՓԵՐ ԵՒ ՏԱԿՏԵՐ։ *Նոտերի և նրանց օկտաւների մասին գաղափար տալուց յետոյ, անհրաժեշտ է, որ ուսուցիչն աշակերտներին ցոյց տայ, թէ մի որևէ վարժութիւն կամ երգ ե՞րբ պէտք է սկսել, թէ իւրաքանչիւր նոտը ո՞րքան ժամանակ պէտք է երկարացնել ու անցնել հետևեալին և թէ՝ ե՞րբ պէտք է երգը վերջացնել։*

*Ուսուցիչը երգել է տալիս դարձեալ ամենքին յայտնի ելևէջը։ Նոյնը երգում է միայն մի հոգի, իսկ ինքը՝ ուսուցիչը քանոնի մի-մի հաւասարաչափ հարուած է խփում սեղանին. ապա երգում է մի ուրիշ աշակերտ՝ աւելի երկար կանգ առնելով իւրաքանչիւր ձայնաստիճանի վրայ. այս անգամ ուսուցիչը երկ-երկու նոյնաչափ հարուած է զարնում և այլն։ Վերջը ընդհանուրին հարց է տրւում. արդեօք երկու (երեք, չորս) աշակերտն էլ միատեսակ երգեցին. նրանց երգածների մէջ ի՞նչ տարբերութիւն*

կար։—Եղանակը նոյնն էր, բայց ժամանակի տեւողութիւնը՝ զանազան *)։

Քանոնի հարուածները կոչւում են բաղխում։ Ամէն մի նոտա առանձին գրուած՝ ունի մէկ բաղխում. 1 2 3 4 5 6 7 İ ։ Երկու բաղխման ժամանակ նոտերի մօտ աւելանում է մէկ-մէկ զատարկ տարածութիւն, ուր գրւում է կէտ՝ 1 • 2 • 3 • 4 • 5 • 6 • 7 • İ • ։ Երեք բաղխման ժամանակ աւելանում է երկ-երկու զատարկ տարածութիւն, ուր գրւում են կէտեր՝ 1 • • 2 • • 3 • • 4 • • եւայլն։ Եթէ թուանշանական նոտի տեղ 0 լինի գրուած,—նշանակում է՝ այդ բաղխումը լռութեամբ պէտք է անցնել, դադար առնել, չերգել (pausa)։ Զերո-ի մօտ եղած կէտը՝ 0 • — աւելացնում է դադարման չափը։

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Մէկ-մէկ բաղխում | 1 | 2 | 3 | 4 | 5 | — | 0 |
| Երկ-երկու բաղխում | 1• | 2• | 3• | 4• | 5• | — | 0• |
| Երեք-երեք բաղխում | 1•• | 2•• | 3•• | 4•• | 5•• | — | 0•• |
| Չորս-չորս բաղխում | 1••• | 2••• | 3••• | 4••• | 5••• | — | 0••• |

Սոյն վարժութիւններն աշակերտները պարտաւոր են բաղխում տալով երգել, որից յետոյ նրանք գլխի կընկնեն, որ միեւնոյն նոտը կարելի է երգել զանազան տեւողութեամբ։

Կէտի տեւողութիւնը միշտ առաջին նոտին է պատկանում։

*) Նոտերի տեւողութեան չափը չպէտք է շփոթել տեմպ-ի (ամանակ) հետ. վերջինս ցոյց է տալիս երգեցողութեան արագութիւնը, որ երգերի սկզբին գրւում է բառերով՝ Adagio (ծանր), Andante, Moderato (չափաւոր) և Allegro (յորդոր)։



Այնուհետեւ ուսուցիչը տեսականապէս ցոյց է տալիս և բացատրում, թէ չորս բաղխում ունեցող նոտն ընդունուած է մի միութիւն, մի ամբողջութիւն *), որից դուրս են գալիս միւս բոլոր չափերը.

Ամբողջ նոտ 1 • • •

Կէս նոտեր 1 • 1 •

Քառորդ նոտեր 1 1 1 1

Եթէ բաժանումն այս կերպ շարունակենք, կստանանք նոտերի աւելի մանր մասեր՝ կարճ տեւողութիւններ։

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Քառորդ նոտեր | 1 | 3 | 5 | 3 | 1 |
| Ութերորդ նոտեր | 12 | 34 | 54 | 32 | 1 |
| Տասնվեցերորդ նոտեր | 1212 | 3434 | 5454 | 3232 | 1 |

Եթէ տասնվեցերորդ նոտերի առաջին մասերը փոխարինենք ութերորդով, կ'ստացուի.

1 12 3 34 5 54 3 32 | 1 • • •

*) Ամեն հաշուի մէջ էլ ընդունուած է որևէ հիմնական միաւոր, որից դուրս են գալիս միւս մեծ և փոքր չափերը. երկարութեան համար, օրինակ, արշինն է. — երկու արշին, երեք արշին, կէս արշին, քառորդ արշին և այլն: Կշիռների համար՝ գրուանքան է. — մէկ գրուանքա, տասը գրուանքա և այլն:

Այժմ եթէ վերցնենք երէք քառորդ ունեցող նոտը մի քառորդ ունեցողի հետ ($^3/_4+^1/_4$) և տևողութեան չափը երկ-երկու անգամ քչացնենք, կըստացուի.

$^3/_4+^1/_4$: $1\bullet\bullet3 \quad 5\bullet\bullet3 \quad 4\bullet\bullet6 \quad \dot{1}\bullet\bullet6 \quad — \quad 4\bullet\bullet\bullet$

$^3/_8+^1/_8$: $1\ \overline{\bullet3} \quad 5\ \overline{\bullet3} \quad 4\ \overline{\bullet6} \quad \dot{1}\ \overline{\bullet6} \quad — \quad 4\bullet$

$^3/_{16}+^1/_{16}$: $\overline{1\ \overline{\bullet3}} \quad \overline{5\ \overline{\bullet3}} \quad \overline{4\ \overline{\bullet6}} \quad \overline{\dot{1}\ \overline{\bullet6}} \quad — \quad 4$

Իհարկէ, այսքան մանրամասն բացատրութիւն չի կարելի մի անգամից տալ, այլ հետզհետէ՝ առիթը ներկայացած դէպքում և այն էլ ուսուցչի ցոյց տուած բաղխման ու երգածի համաձայն: Միայն աշակերտները պէտք է լաւ իմանան, որ գծի տակ եղած նոտերի խմբակցութիւնները կազմում են մէկ-մէկ բաղխում.

$1 \quad \overline{12} \quad \overline{123} \quad \overline{1\overline{23}} \quad \overline{\overline{1234}}$ ևայլն.

Բաղխման մասերն էլ քանոնի շարժումներով կամ մատնահաշուով պէտք է հասկացնել ու երգել տալ:

---

Մի ուրիշ՝ լրացուցիչ դասով էլ տակտի նշանակութիւնը պէտք է բացատրել: Այս նպատակով ուսուցիչը երգում է ելևէջը մէկումէջ շեշտելով՝

$\overset{>}{1} \quad 2 \quad \overset{>}{3} \quad 4 \quad \overset{>}{5} \quad 6 \quad \overset{>}{7} \quad \dot{1}$

և հարց է տալիս իմանալու համար, թէ աշակերտներն այդ բանը նկատեցի՞ն: Եթէ չեն նկատել, նոյնը



նրանց է երգել տալիս, իսկ ինքը քանոնով խփում է սեղանին մէկ պինդ, մէկ կամաց: Աւելի լաւ պարզելու համար՝ ուսուցիչը նորից է երգում, բայց այս անգամ շեշտը դնելով չորսումէջ՝

$\overset{>}{1} \quad 2 \quad 3 \quad 4 \quad \overset{>}{5} \quad 6 \quad 7 \quad \dot{1} \quad \overset{>}{\dot{1}} \quad 7 \quad 6 \quad 5 \quad \overset{>}{4} \quad 3 \quad 2 \quad 1$

Աշակերտներն անշուշտ կըգուշակեն, որ կան բաղխումներ, որոնք զօրեղ շեշտ ունեն, զօրեղ են երգւում և կան, որոնք թոյլ շեշտ ունեն (ինչպէս և ոտանաւորների րիթման): Այնուհետև նրանց պէտք է հասկացնել, թէ երգեցողութեան կանոնաւորութեան համար, երգերը և այլ երաժշտական գրուածքներն ուղղահայեաց գծերով բաժանւում են հաւասարաչափ մասերի՝ բաղխումների, որոնք կոչւում են տակտեր *):

$^2/_4$: | 1 2 | 3 4 | 5 6 | 7 $\dot{1}$ ‖

Այստեղ իւրաքանչիւր տակտն ունի երկու բաղխում, որոնց տևողութեան գումարը կէս նոտի է հաւասար:

$^4/_4$: | 1 2 3 4 | 5 6 7 $\dot{1}$ | $\dot{1}$ 7 6 5 | 4 3 2 1 ‖

Իւրաքանչիւր տակտը բաղկացած է չորս բաղխումից, որոնց գումարն ամբողջ նոտի է հաւասար:

Աշակերտները բաղխումներին ու տակտերին աւելի լաւ կընտելանան, երբ նրանք հետզհետէ վարժուեն

---

*) Երկար երգերը բաժանում են նախ պարբերութիւնների ու նախադասութիւնների և ապա տակտերի (հատածների) ու բաղխումների:

ձեռի կամ քանոնի հաւասարաչափ շարժումներին։ Այսպէս. երբ տակտը բաղկացած լինի երկու բաղխումից, ձեռը պէտք է շարժել նախ ցած և ապա վերև, համարելով՝ Մէկ-երկու, Մէկ-երկու...




Եթէ տակտը երեք բաղխում ունենայ, ձեռը պէտք է շարժել՝ ցած, աջ (կարելի է նաև ձախ) և վերև, կրկնելով՝ Մէկ-երկու-երեք, Մէկ-երկու-երեք...




Չորս բաղխման ժամանակ ձեռը շարժել՝ ցած, ձախ, աջ, վերև, պարբերաբար հաշուելով՝ Մէկ-երկու-երեք-չորս և այլն...




Աշակերտները միշտ պէտք է աչքի առաջ ունենան, որ ձեռի առաջին (Մէկ) շարժման ժամանակ շեշտով երգեն, իսկ միւս շարժումներին աւելի թոյլ։



## Վարժութիւններ Գ դասի.

Չորս տակտ 2-ական բաղխումով կամ երկու տակտ 4-ական բաղխումով.

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | $\dot{1}$ |
| 1 | $\overline{\cdot 2}$ | 3 | $\overline{\cdot 4}$ | 5 | $\overline{\cdot 6}$ | 7 | $\overline{\cdot \dot{1}}$ |
| $\overline{1}\,\overline{\overline{\cdot 2}}$ | $\overline{3}\,\overline{\overline{\cdot 4}}$ | $\overline{5}\,\overline{\overline{\cdot 6}}$ | $\overline{7}\,\overline{\overline{\cdot \dot{1}}}$ | $\overline{\dot{1}}\,\overline{\overline{\cdot 7}}$ | $\overline{6}\,\overline{\overline{\cdot 5}}$ | $\overline{4}\,\overline{\overline{\cdot 3}}$ | $\overline{2}\,\overline{\overline{\cdot 1}}$ |

Չորս տակտ 3-ական բաղխումով կամ երկու տակտ 6-ական բաղխումով.

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 5 | 6 | 7 | $\dot{1}$ | $\dot{2}$ | $\dot{3}$ |
| 1 | • | 2 | 3 | • | 4 | 5 | • | 6 | 7 | • | $\dot{1}$ |
| 1 | 2 | 0 | 3 | 4 | 0 | 5 | 6 | 0 | 7 | $\dot{1}$ | 0 |

Երկու հաւասար մասից բաղկացած բաղխումներ.

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| $\overline{12}$ | $\overline{34}$ | $\overline{56}$ | $\overline{7\dot{1}}$ | $\overline{\dot{1}7}$ | $\overline{65}$ | $\overline{43}$ | $\overline{21}$ | 1 • |
| $\overline{13}$ | $\overline{24}$ | $\overline{35}$ | $\overline{46}$ | $\overline{57}$ | $\overline{6\dot{1}}$ | $\overline{\dot{1}6}$ | $\overline{53}$ | 1 • |

Երեք և չորս հաւասար մասից բաղկացած բաղխումներ.

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| $\overset{3}{\overline{123}}$ | $\overset{3}{\overline{234}}$ | $\overset{3}{\overline{345}}$ | $\overset{3}{\overline{456}}$ | $\overset{3}{\overline{567}}$ | $\overset{3}{\overline{67\dot{1}}}$ | $\dot{1}$ • |
| $\overline{\overline{1234}}$ | $\overline{\overline{2345}}$ | $\overline{\overline{3456}}$ | $\overline{\overline{4567}}$ | $\overline{\overline{\dot{1}767}}$ | $\dot{1}$ | |

---

Կանոն.—Բաղխումները ցոյց են տալիս նոտերի տևողութեան չափը։ Տակտերը ցոյց են տալիս բաղխումների կանոնաւոր խմբակցութիւններն ու շեշտադրութիւնը։



## ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍ

ԿԻՍԱՁԱՅՆԵՐ: Իւրաքանչիւր նոտ իւր իսկական ձայնից, տոնից*) կարելի է կէս ձայն բարձրացնել կամ ցածացնել։ Այս դէպքում նոտերը նոյն թուանշաններով են գրւում և նոյն անունն են կրում. իսկ դիտողութեան համար նրանց վրայից թեք գիծ են քաշում։ Երբ թեք գծերը ձախից աջ են դէպի վեր՝ 1 2 3 4 5 6 7 i, նոտերը կէս ձայն բարձրանում են (կէս-վէր — dièse)։ Ընդհակառակը, երբ նոյն գծերը ձախից աջ են դէպի վայր՝ 1 2 3 4 5 6 7 i նոտերը կէս ձայն ցածանում են (կէս-վար — bémol)։

Կիսաձայների մասին գաղափար տալու համար, աշակերտները թող երգեն իրենց իմացած ելևէջի մինչև չորրորդ աստիճանը, վերջինս կրկնելով երրորդի հետ մի քանի անգամ՝ 1 2 3 4 3 4 3 4 ... Նոյնը թող երգեն հինգերորդ աստիճանից մինչև ութերորդը, այս էլ կրկնելով եօթերորդի հետ մի քանի անգամ՝

*) Մուզիքական ձայնը կոչւում է տոն (ton)։



5 6 7 i 7 i 7 i ... և տալ յայտնել, թէ ինչպէս երգւում է 4 3 4 կամ i 7 i, այնպէս էլ պէտք է երգել.

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2 | 1 | 2 | կամ | 2 | 2 | 2 |
| 3 | 2 | 3 | | 3 | 3 | 3 |
| 5 | 4 | 5 | | 5 | 5 | 5 |
| 6 | 5 | 6 | | 6 | 6 | 6 |

Սա ժամանակ զգուշանալու է՝ խրոմատիքական ելևէջից.

1 1 2 2 3 4 4 5 5 6 6 7 i

i 7 7 6 6 5 5 4 3 3 2 2 1

Նորուսները չեն կարող հասկանալ և մանաւանդ չեն կարող երգել, այլ ընդհակառակը՝ աւելի կը շփոթուեն։

Կիսաձայների մասին եղած վերոյիշեալ տեղեկութիւնը բաւական է, իսկ այնուհետև՝ պատահած տեղերում (երգերի կամ աղօթքների մէջ) կարելի է առանձին վարժեցնել։

Վարժութիւններն անցնելիս խիստ պէտք է ուշադիր լինել, որ ամբողջ և կէս ինտերվալները վերցնեն համարձակ, մաքուր և պարզ. իսկ ուրիշների երգած ժամանակ կարողանան գուշակել ու զանազանել մէկը միւսից։

Լաւ կը լինէր, եթէ գաշնամուրի վրայ ցոյց տրուէր Դօ Մաժոր (C dur) ելևէջի շարքը և բացատրուէր թէ՝ բոլոր ստեղունքների (կլաւիշ) մէջ կան սև ստեղունքներ՝ կիսաձայներ, բացի 3-ից 4-ը և 7-ից

i̇-ը, որոնց յայնի միջի տարածութիւնը (ինտերվալը) բնական կէս ձայն է արդէն։

1=2 2=3 4=5 5=6 6=7




## Վարժութիւններ Դ դասի

| Ամբողջ ձայներ. | | | Կիսաձայներ. | | |
|---|---|---|---|---|---|
| 1 2 1 | 2 3 2 | 4 5 4 | 3 4 3 | 2 2 2 | 5 5 5 |
| 2 1 2 | 3 2 3 | 5 4 5 | i̇ 7 i̇ | 3 2 3 | 6 5 6 |
| 5 6 7 | 7 6 7 | 7 6 5 | 4 4 5 | 5 5 5 | 6 6 5 |

Վարժեցնել յատկապէս մինոր-հարմոնիքի ելևէջը.

(1) 2 (1)
2 3 2
2 3 4 3 2
2 3 4 5 4 3 2
2 3 4 5 6 5 4 3 2
2 3 4 5 6 7 6 5 4 3 2
2 3 4 5 6 7 i̇ 7 6 5 4 3 2
2 3 4 5 6 7 i̇ 2̇ i̇ 7 6 5 4 3 2*



## Մինոր հարմոնիք.

6̣ 7̣ 1 2 3 4 5 6 ⁀ 6 5 4 3 2 1 7̣ 6̣
6̣ 7̣ 1 2 3 4 5 — 5 4 3 2 1 7̣ 6̣
6̣ 7̣ 1 2 3 4 — 4 3 2 1 7̣ 6̣
6̣ 7̣ 1 2 3 — 3 2 1 7̣ 6̣
6̣ 7̣ 1 2 — 2 1 7̣ 6̣
6̣ 7̣ 1 — 1 7̣ 6̣
6̣ 7̣ — 7̣ 6̣
6̣ — 6̣*)

Նոյն վարժութիւնների վերջի նոտերը իրար հետ կապելով երգել։

Երգել մինոր-ելևէջի միայն առաջին թեթրախորդը (չորս ձայնաստիճան) և ապա՝ միմիայն երկրորդ թեթրախորդը (5-րդ աստիճանից մինչև 8-րդը — 3 4 5 6 | 6 5 4 3).

Համեմատել Մաժոր և մինոր ելևէջները։ Գտնել նրանց մէջ եղած կիսաձայներն ու ամբողջ ձայները։

---

Կանոն.—Երկու նոտերի ամենամօտ միջոցը կոչւում է կիսաձայն։

Ամբողջ ձայնը կազմուած է երկու կիսաձայնից։

---

*) Մինորի ելևէջը կազմւում է Մաժորի երկրորդ և վեցերորդ աստիճաններից։

i-ը, որոնց յաջնէ մէջէ տարածութ–ին–նը (ինտերվալը) բնական կէս ձայն է արդէն։

1=2 2=3 4=5 5=6 6=7




## Վարժութիւններ Դ դասի

| Ամբողջ ձայներ. | | | Կիսաձայներ. | | |
|---|---|---|---|---|---|
| 1 2 1 | 2 3 2 | 4 5 4 | 3 4 3 | 2 2 2 | 5 5 5 |
| 2 1 2 | 3 2 3 | 5 4 5 | i 7 i | 3 2 3 | 6 5 6 |
| 5 6 7 | 7 6 7 | 7 6 5 | 4 4 5 | 5 5 5 | 6 6 5 |

Վարժեցնել յատկապէս մինոր-հարմոնիքի ելեէջը.

(1) 2 (1)
2 3 2
2 3 4 3 2
2 3 4 5 4 3 2
2 3 4 5 6 5 4 3 2
2 3 4 5 6 7 6 5 4 3 2
2 3 4 5 6 7 1̇ 7 6 5 4 3 2
2 3 4 5 6 7 1̇ 2̇ 1̇ 7 6 5 4 3 2*



### Մինոր հարմոնիք.

6̣ 7̣ 1 2 3 4 5 6 ⁀ 6 5 4 3 2 1 7̣ 6̣
6̣ 7̣ 1 2 3 4 5 — 5 4 3 2 1 7̣ 6̣
6̣ 7̣ 1 2 3 4 — 4 3 2 1 7̣ 6̣
6̣ 7̣ 1 2 3 — 3 2 1 7̣ 6̣
6̣ 7̣ 1 2 — 2 1 7̣ 6̣
6̣ 7̣ 1 — 1 7̣ 6̣
6̣ 7̣ — 7̣ 6̣
6̣ — 6̣*)

Նոյն վարժութիւնների վերջի նոտերը իրար հետ կապելով երգել։

Երգել մինոր-ելեէջի միայն առաջին թետրախորդը (չորս ձայնաստիճան) և ապա՝ միմիայն երկրորդ թետրախորդը (5-րդ աստիճանից մինչև 8-րդը — 3 4 5 6 | 6 5 4 3)։

Համեմատել Մաժոր և մինոր ելեէջները։ Գտնել նրանց մէջ եղած կիսաձայներն ու ամբողջ ձայները։

---

Կանոն.—Երկու նոտերի ամենամօտ միջոցը կոչւում է կէսաձայն։
Ամբողջ ձայնը կազմուած է երկու կիսաձայնից։

*) Մինորի ելեէջը կազմւում է Մաժորի երկրորդ և վեցերորդ աստիճաններից։

# ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍ

---

ԳԵՂԵՑԿՈՒԹԵԱՆ ՆՇԱՆՆԵՐ: Բաւական չէ նոտեր իմանալ ու սովորած չափերով չոր ու ցամաք երգել, այլ պէտք է նաև ուշ.ք դարձնել երգեցողութեան գեղեցկութեան վրայ. այս բանը կախուած է նիւ՛անս-ների (նրբութիւնների) ճիշտ կատարումից: Այս մասին ուսուցիչը յատուկ մի դաս պէտք է նուիրէ՝ կատարելով զանազան վարժութիւններ և տեսականապէս ցոյց տալով համապատասխան նշանները:

Երգել տալ իմացած ելևէջը՝ յորդոր, չափաւոր, ծանր: Տեմպի և Մետրոնոմի (չափացոյց) մասին համառօտ տեղեկութիւն տալուց յետոյ, երգել տալ նոյն ելևէջը միջակ, զօրեղ, մեղմ (հազիւ լսելի), կտրտելով, կապելով, շեշտելով..

Երգեցողութիւնն առհասարակ չպէտք է լինի կոկորդից՝ բղաւելով, ոչ էլ քթից կամ ատամների արանքից՝ սեղմուած ձայնով, այլ միջակ, հանդարտ, լիքը բերանով ու կրծքային: Տեղ-տեղ, ուր ուժով է



հարկաւոր երգել, այնտեղ նոտի գլխին գրւում է f, ff (forte — ուժեղ), իսկ ուր կամաց պէտք է երգել, այնտեղ գրւում է p, pp (piano — մեղմ):

Այս կերպ բացատրել և վարժեցնել նաև մնացած գեղեցկութիւնները:

< Այն նշանը գրւում է մի շարք նոտերի գլխին, որ երգելիս մեղմ ձայնը հետզհետէ պէտք է զօրեղացնել (crescendo — զօրացուցիչ):

> Դրւում է նոյնպէս նոտերի գլխին, որ երգելիս՝ ընդհակառակը, զօրեղից պէտք է հետզհետէ անցնել մեղմի (decrescendo կամ diminuendo — մեղմացուցիչ):

> Փոքր նշանս եթէ դրուի մի նոտի վրայ, պէտք է շեշտել այն, յանկարծ զօրեղ վերցնել:

<> Դրւում է մի նոտի վրայ, որը մեղմ պէտք է երգել, հետզհետէ ձայնը զօրեղացնել ու դարձեալ մեղմացնելով՝ հանգցնել:

⁀ Կոչւում է կապ. երկու կամ մի շարք նոտեր կապւում է իրար հետ, որոնք պէտք է կապելով սահուն երգել՝ առանց շունչ քաշելու (legato): Այստեղ մի քիչ պէտք է կանգ առնել և երգելով կամ, եթէ հնար է, Ջօ-Ըօւլլ օֆնօ-Ըեօմե ցոյց տալ, թէ ինչպէս երկու հեռաւոր նոտ՝ իրար հետ կապելիս՝ նրանց միջի տարածութիւնը (ինտերվալը) խորամանկաբար պէտք է լցնել, որպէս զի երգածն խկապէս երաժշտական լինի և ազդի ունկնդիրների վրայ: Օրինակ 1⁀5 դեռ հինգերորդը չերգած՝ առաջին բաղխման մէջ պատրաստել այդ ձայնատի-

ձանը՝ $1^{5}\frown 5$, կամ $5 \bullet \frown 3 \bullet$ երկու նոտի արանքը զօրութեամբ լցնել 5-ի և 4-ի սահող ձայներով (glissando) ևայլն:

Վերոյիշեալը չպէտք է խառնել այն փոքրիկ նոտերի հետ, որոնք ոչ թէ աննկատելի սահելով են անցնում, այլ նկատելի կերպով՝ թէ գրւում են և թէ չեշտւում. դրանք կոչւում են ընդհարումներ՝ $^{5}4 \bullet\ ^{\overline{345}}6\ \overline{\bullet 4}$ | $5 \bullet$ ևայլն:

tr. կամ ~~ Ինչ նոտի գլխին գրուի, այն պէտք է դողդողացնելով կամ—ինչպէս ասում են,—մըրմըղացնելով երգել, բայց ոչ քթից (trillo—խաղ):

𝄐 Դրւում է մի որևէ նոտի վրայ և ցոյց է տալիս, որ այդ նոտը իւր տևողութեան չափից աւելի երկար պէտք է երգել՝ ըստ կամաց (fermata—երկարացնելու նշան):

‖: :‖ կամ ≠ Կրկնութեան նշաններ են (replica), որոնք գրւում են երգի այն մասի սկիզբն ու վերջը, որն հարկաւոր է երկու կամ աւելի անգամ կրկնել, երգել: Եթէ կրկնւող մասերի վերջաւորութիւնները ջոկ են, առաջին եղանակ վերջաւորութեան գլխին գրւում է երկար միացնող գիծ և ապա կրկնութեան նշանը՝ |‾‾‾ I-mo ‾‾‾|. երկրորդ եղանակ վերջաւորութիւնն էլ որոշւում է նոյն տեսակի միացման գծով՝ կրկնութեան նշանից յետոյ |‾‾‾ II-do ‾‾‾|:

Հարկաւոր է, իսկապէս, գեղեցկութեան նշաններից անհրաժեշտները սովորեցնել, իսկ մնացածների մասին բացատրութիւն տալ պատահած տեղերում միայն:



Վարժութիւններ ե դասի.

< f > p >
ա | 1 2 3 4 | 5 4 3 2 | 1 2 3 2 | 1 • • • |

< f > p >
բ | 2 3 4 5 | 6 5 4 3 | 2 3 4 3 | 2 • • • |

գ | 1⌒3 3⌒5 | 5⌒1̇ • • | 1̇⌒5 5⌒3 | 1 • • • |

դ | 2⌒4 4⌒6 | 6⌒2̇ • • | 2̇⌒6 6⌒4 | 2 • • • |

< I-mo II-do
ե ‖: 1 2 3 4 | 5 4 5 • 4 | 3 2 1 2 :‖ 3 2 1 • |

զ ‖: 2 3 4 5 | 6 5 6 • 5 | 4 3 2 3 :‖ 4 2 3 • |

> f~~ <>
է | 1̇ • 7 • | 1̇ • • 0 | 5 1̇ 7 6 5 • | 4 3 2 7̣ | 1 • |

ը | 6 • 5 • | 6 • • 0 | 3 6 5 4 3 • | 2 1 7̣ 5̣ | 6̣ • |

Վերցնել մի որևէ տոն և վարժեցնել երկար պահելու ա-ով՝ մինչև 10, 15, 20, 25, 30... վայրկեան:

Նոյնը վարժեցնել զօրեղացնելով, մեղմացնելով—յանկարծ և հետզհետէ:

Կանոն.—Երգեցողութիւնը գեղեցիկ դուրս կըգայ, եթէ ցոյց տուած նշանները ճիշտ կատարուին:

## ՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՍ

———

ՁԱՅՆԱԳՐՈՒԹԻՒՆ: Այս վերջին դասում աշակերտներն արդէն կլսավորեն զանազան եղանակներ, մելօդիաներ: Ժամանակի կորուստ չունենալու համար՝ վարժութիւնները պէտք է ընտրել պատարագի երգեցողութիւնից:

Աշակերտների լսողութիւնն ու միտքը զարգացնելու համար՝ պէտք է պարզ կտորներից [illegible] անել ձայնագրել տալ. այսինքն՝ մինչև այժմ սովորած ձայնաստիճանները ոչ միայն ա գրով, այլ խօսքերի, վանկերի միջոցով յիշեցնել*): Այս մասին

*) Թեթև թելադրութեամբ եւևէջի իւրաքանչիւր տոնը աշակերտներն հէնց առաջին դասերից պէտք է գուշակելու և գրելու վարժուին. 1 2, 1 3, 1 4, 1 5, ևայլն, ձայնաւոր ա-ով կամ **Ամէն** երգելով:

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1 . 1 . | 2 . 2 . | 1 . 2 . | 1 . 3 . | 1 2 3 . | 3 2 1 . |
| Ա մէն | Ա մէն | Ա մէն | Ա մէն | Ա ա մէն | Ա ա մէն |

| | | | |
|---|---|---|---|
| ապա կրճատ՝ | 1⁀2 3 . | 3⁀2 1 . | ևայլն: |
| | Ա — մէն | Ա — մէն | |



ուսուցիչը պէտք է առաջնորդուի մօտաւորապէս հետևեալ կարգով.

1) Որևէ աղօթքի իմաստը կարճ բացատրելուց յետոյ՝ բառերն անգիր անել տալ:

2) Նոյն աղօթքի եղանակը սովորեցնել լսողութեամբ և ճիշտ բաղխումներով:

3) Աղօթքը ձայնագրել՝ բաժանելով բաղխումների և տակտերի:

Մանրամասն բացատրութիւնը թողնում ենք նախկին դասերից փորձուած ուսուցչի հմտութեան. վերցնենք մի օրինակ միայն.

Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ,
Որ էնն Աստուած աստ բազմեցաւ:

Բառերն ու եղանակն անգիր սովորեցնելուց յետոյ, հարց տալ: Իւրաքանչիւր տողը քանի՞ վանկ ունի, ամէն մի վանկ քանի՞ բաղխումից է բաղկացած, ամէն մի բաղխում քանի՞ նոտ ունի: Նոտերն այստեղ ի՞նչպէս են շեշտւում (— մէկումէջ): Ասել է՝ իւրաքանչիւր տակտը քանի՞ բաղխում, քանի՞ նոտ, քանի՞ վանկ ունի (— երկ-երկու):

| | | | |
|---|---|---|---|
| Քրիս-տոս | ի-մէջ | մեր-յայտ | նե-ցաւ, |
| Որ-էնն | Աս-տուած | աստ-բազ | մե-ցաւ: |

Ապա ուսուցչի օգնութեամբ գուշակում են իւրաքանչիւր վանկի նոտերն ու գրում.

| | | | |
|---|---|---|---|
| 1 3 | 4 5 | 5 5 | 5 6 |
| Քրիս տոս | ի մէջ | մեր յայտ | նե ցաւ, |
| 4 5 | 5 4 | 6 5 | 4 3 |
| Որ էնն | Աս տուած | աստ բազ | մե ցաւ: |

Աղօթքիս շարունակութեան մէջ պատահելիք դժուարութիւններն հարթելու համար՝ պէտք է առանձին վարժեցնել 5 6 7 1̇ | 1̇ 7 6 5, այսինքն ելևէջի վերին թեթրախորդը՝ հարմոնիքական մասը, ուր պատահում է 6⁀7⁀6 — դժուար ինտերվալը (մէկ ու կէս տոն):

---

Վարժութիւններ Զ դասի.

Ձայնագրել կամ ձայնագրած եղանակը երգել:

(1 = 4 *)

| 54 | 3 | 4⁀6 | | 5 • |
|---|---|---|---|---|
| Տէր | ո | ղո | ր | մեա: |

p

| 2 | 23⁀45 | | 43⁀2 | | 35 | 4 | 3 | 4•3 | 2 • |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Յի | շեա | — | տէ | ր | եւ | ղոր | մեա | — | — |

---

Կանոն.— Նոտերի զանազանակերպ դասաւորութիւնից առաջ է գալիս մի որևէ եղանակ, Մեղեդի (melodia — մեղեդի):

*) 1=4 նշանակում է 1 ձայնաստիճանն ըստ կամերտոնի՝ պէտք է 4-րդ (fa) վերցնել: Այդպէս էլ՝ 1=3 նշանակում է 1-ը պէտք է վերցնել մի-բեմոլ'ի տոնով ևայլն:

# ԽՄԲԱԿԱՆ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ

Խմբական երգեցողութեան համար երգիչներ պէտք է ընտրել՝ որքան հնարաւոր է՝ մաքուր ձայն և լաւ լսողութիւն ունեցողներին:

Յայտնի է, որ երեխաների և կանանց ձայներն աւելի բարակ են և բարձր, քան տղամարդկանցը, որոնց ձայնը ցած է և հաստ: Սրա համեմատ էլ ձայները բաժանւում են՝ իգական և արական:

1) Իգական բարձր ձայնը կոչւում է սոպրան (դիսկանտ) և որոշւում է իւր բարձրութեամբ, փափկութեամբ ու ճկունութեամբ: Սովորական սոպրանի ձայնի ծաւալն է հիմնական դօ-ից մինչև երկրորդ սօլ:

2) Իգական ցած ձայնը կոչւում է ալտ և որոշւում է իւր զօրեղութեամբ, մետաղական հնչիւնով և քնքշութեամբ: Ալտի ձայնի ծաւալն է՝ սովորական սօլ-ից մինչև երկրորդ ռէ:

3) Արական բարձր ձայն՝ տենօր-ը համապատասխան է սոպրանի ձայնի ծաւալին. որոշւում է իւր բարձրութեամբ, քաղցրութեամբ, մեղմութեամբ ու ճկունութեամբ:

4) Արական ցած ձայն՝ բասս-ը համապատասխան է ալ՛տի ձայնին, բայց նրանից աւելի ցածր նոտեր է վերցնում։ Սրա յատկութիւնն (տեմբր) է՝ խտութիւնը, զօրեղութիւնը, մասամբ և կոշտութիւնը։

Հետևեալ նկարը ցոյց է տալիս իւրաքանչիւր ձայնի ծաւալը (diapason).

իգական ձայներ.

սօպրան

(5̣) 6̣ 7̣ 1 2 3 4 5 6 7 1̇ 2̇ 3̇ 4̇ 5̇

ալտ՛

արական ձայներ.

տենօր

(3̣) 4̣ 5̣ 6̣ 7̣ 1 2 3 4 5 6 7 1̇ 2̇ 3̇ 4̇ 5̇

բասս

Թէպէտ իգական և արական ձայները նոյն թուանշանական նոտերով են երգւում, բայց՝ ըստ եւրոպական ձայնագրութեան՝ արական ձայները պէտք է մի օկտաւ ցած հասկանալ։

---

Խումբ կարելի է կազմել՝ միայն իգական ձայներով, կամ միմիայն արական ձայներով և կամ աւելի յաճախ՝ թէ մէկից և թէ միւսից միասին։ Այս պատճառով լինում են՝

Արական խումբ } — միասեռ.
Իգական խումբ }
Խառն խումբ — — երկսեռ։



1) Միմիայն իգական ձայներով կարելի է կազմել երկձայն, եռաձայն և թէ քառաձայն խումբ։ Վերջին դէպքում սօպրաններն ու ալ՛տերը բաժանւում են երկ-երկուսի — սօպրան և մեցցօ-սօպրան, ա՛լտ և կոնտր-ալ՛տ։

2) Արական ձայներով էլ կարելի է նոյնն անել բաժանելով տենօրներն ու բասսերը երկ-երկու խմբի՝ տենօր առաջին և տենօր երկրորդ, առաջին բասս (բարիտօն) և երկրորդ բասս կամ խոր-բասս (բասսօ պրօֆօնդօ)։

3) Խառն խումբը, որ աւելի լրիւ է և գեղեցիկ, գլխաւորապէս քառաձայն է լինում — սօպրան, ալ՛տ տենօր և բասս։ Մասնակցող երգիչների շատութեան դէպքում, դրանցից իւրաքանչիւրը կարելի է երկսի բաժանել (divisi)։

Երգեցիկ խմբում, իւրաքանչիւր բաժնի (պարտիայի) անդամների թիւը համեմատական չափով է լինելու՝ նայելով մասնակցողների քանակութեան ու նրանց ձայների որակութեան՝ զօրութեան։ Բայց մօտաւորապէս մէկ բասս-ին, եթէ ոչ աւելի, գոնէ երկուսօպրան է հարկաւոր. տենօրների ընդհանուր թիւը բասսերից մէկով (երկուսով) կարող է պակաս լինել, իսկ ալ՛տերը, եթէ ոչ աւելի, գոնէ տենօրների քանակութեան չափով են լինելու։

---

Անցած վեց դասում երգիչները բաւական ծանօթացած կլլինին ձայնանիշների կազմութեան հետ և այդ ձայնանիշներով կարող կլլինին թեթև, պարզ մելօդիաներ ձայնագրել և գրածը երգել (միայն մի ութնեակի շրջանակում ի հարկէ)։ Այնուհետև նրանց լսողութիւնը պէտք է ընտելացնել հարմօնիայի (ներդաշնակութեան), երգել տալով նախ՝ դուէտներ (երկձայն-երգեր), կանօններ (canon) և ապա բազմաձայն վարժութիւններ—գլխաւորապէս պատարագի երգեցողութիւնից։

Վարժութիւններն ինքը՝ խմբապետը կարող է ընտրել ըստ կամաց՝ աչքի առաջ ունենալով իւր երգիչների ոյժն ու կարողութիւնը։

Վարժութիւններն անցնելիս՝ պէտք է սկսուածքներին ու վերջաւորութիւններին (cadence) մեծ ուշք դարձնել, որ միասին՝ միաժամանակ սկսեն և միասին վերջացնեն։ Բացի այդ, խմբական երգեցողութեան ժամանակ պահպանուելու են նաև հետևեալ կանոնները․

1) Երգիչները*) պէտք է կանգնեն այնպէս, որ ամենքն էլ տեսնեն խմբապետի ձեռի շարժումները․ խմբապետի աջ կողմում լինելու են սոպրանները և սրանց յետևում՝ տենօրները, իսկ ձախ կողմում՝ ալ՛տերն ու բասսերը․ բոլորի երեսները դէպի խմբապետը, իսկ խմբապետի երեսը դէպի սեղան պէտք է լինի։

*) Տպաւորութեան գեղեցկութեան համար՝ եկեղեցում նրանք միատեսակ ժամաշապիկներ են հագնելու, իսկ մասնակցող երգչուհիները (եթէ կան) կրելու են նոյն գոյնի թիկնոց-գոգնոց։






2) Կանգնուածքը պէտք է լինի ուղիղ, կուրծքերը քիչ դուրս ցցած, գլուխներն անշարժ, դէմքերի գծագրութիւնն հանդիստ և, եթէ բերանացի են երգում, ձեռները խաչաձև բարև բռնած։

3) Նոտերը պէտք է վերցնել լիքը բերանով ու կրծքային ձայնով, իսկ բարձր ձայնանիշները՝ գլխի ձայնով (falset). Թոյլատրելի է խիստ-բարձր նոտեր վերցնելիս գլուխը քիչ կախ գցել, խիստ-ցած նոտեր երգելիս՝ գլուխը քիչ յետ բարձրացնել։ Ազատ երգելու համար մէջքը չպէտք է զօտիով կամ սեղմիրանով սեղմել, պինդ կապել։

4) Երգելիս բառերը պէտք է արտասանել մաքուր ու պարզ, որպէս զի լսողի համար հասկանալի լինին և երգեցողութիւնը աւելի մեծ տպաւորութիւն թողնի։ Ռնգային և կոկորդային երգեցողութիւնը խստիւ պէտք է արգելել։

5) Բոլոր երգիչների ձայները պէտք է ի մի ձուլուին՝ իբր մի ամբողջութիւն. ցուցամոլ երգիչներին զգուշացնելու է, որ նրանց ձայնը խմբից չջոկուի։

6) Ուրաքանչիւր երգիչ՝ եթէ ցանկանում է երկար շունչ առնել, հանգստանալ, — շատ զգուշութեամբ պէտք է ձայնը դադարեցնի. իսկ նորից երգելիս էլ պէտք է կամաց ձայնով խառնուի խմբի մէջ, որպէս զի այդ բանը ունկնդիրների համար աննկատելի մնայ։

7) Շնչառութիւնը պէտք է լինի **բոլորովին բնական**՝ նախադասութիւնների կամ խօսքերի վերջերին. շունչ պէտք է քաշել այն ժամանակ, երբ դեռ ևս թոքերում օդի պաշար կայ։ Շնչասպառ երգեցողութիւնն արգելւում է, որովհետև թէ վատ տպաւորութիւն է թողնում և թէ երգչի ձայնը կարող է փչանալ*)։

8) Խմբապետը խմբի հետ չպէտք է երգէ, այլապէս նա չի կարող իւր խմբի պակասութիւնները նկատել։ Խմբապետի պարտականութիւնն է **կամերտոնի** (ձայնացոյց) օգնութեամբ իւրաքանչիւր ձայնին **տոն** տալ՝ առանց շտապելու և շփոթուելու, այնուհետև չափ տալ ու զանազան պայմանական նշաններով հասկացնել նրբութիւնները (նիւ՛անսները)։ Լաւ չիմացած երգը կամ աղօթքը հրապարակով չպէտք է երգել. դրանից կարող է խայտառակութիւն

*) Ձայնը կարող է փչանալ՝ սաստիկ ուժով երգելուց—ձայնին զոռ տալուց, երկար ժամանակ անընդհատ երգելուց, ընկուզեղէն, թթու-կծու, չոր բաղսիմած ուտելուց, ծխելուց, խմիչքներ **չափից դուրս** գործածելուց, մրսելուց և այլ հիւանդութիւններից: Ձայնի համար օգտակար է՝ թաց մրգեղէնը, կաթը, ձուի դեղնուցը կոնեակի հետ հարած եայլն:



ծագել և երգիչների մէջ վհատութիւն ընկնել, այնպէս որ վերջիններս այնուհետև լաւ իմացած երգերն անգամ կըմոռանան ու չեն կարողանալ վստահ և ուղիղ երգել։

9) Եկեղեցում սարկաւագի կամ քահանայի ձայնը խմբական երգեցողութեան հետ ներդաշնակ պէտք է լինի. նրանք աւետարան կարդալիս՝ երգածի առաջին աստիճանով կամ բարձր օկտաւով պէտք է վերցնեն. իսկ եթէ այդ անհնար է, գոնէ **հինգերորդ աստիճանով** (դոմինանտ) հարկաւոր է կարդալ։

## Խ մ բ ա կ ա ն  վ ա ր ժ ո ւ թ ի ւ ն ն ե ր.

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Սօպրան, տենոր | 3 | 4 | 5 | 6 | 7 | $\dot{1}$ | $\dot{2}$ | $\dot{3}$ (𝄐) | տերցիա |
| Ալ՛տ, բասս | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | $\dot{1}$ | |

Այն երկձայն վարժութիւնը մի քանի անգամ ելևէջել (ա-ով)՝ ծանր, չափաւոր, յորդոր. զօրեղ, միջակ, մեղմ. կտրատելով, կապելով, դողդողացնելով. . . .

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Սօպրան, տենոր | 6 | 7 | $\dot{1}$ | $\dot{2}$ | $\dot{3}$ | $\dot{2}$ | $\dot{1}$ | 7 | 6 | • (𝄐) | |
| Ալ՛տ, բասս | 1 | 2 | 3 | 4 | 5 | 4 | 3 | 2 | 1 | • | |
| | < | < | < | < | | | > | > | > | | |
| Սօպրան, տենոր | $\dot{1}$ | $\dot{2}$ | $\dot{3}$ | $\dot{4}$ | $\dot{5}$ | $\dot{4}$ | $\dot{3}$ | $\dot{2}$ | $\dot{1}$ | • | |
| Ալ՛տ, բաս | 3 | 4 | 5 | 6 | 7 | 6 | 5 | 4 | 3 | • | |

սեկուենց

**Կանոն.** (1=4) | a) 1 $\overline{12}$ 3 $\overline{\cdot 2}$ | b) 3 $\overline{\cdot 4}$ 5 • |
ժամ կոչաղ բէ րը | վե րե լաւ

c) $\overline{56}$ $\overline{54}$ 3 1 | d) 1 $\underset{\cdot}{5}$ 1 • ‖
զանգակ ները զար կաւ | դին բոմ բոմ

Այս եղանակը կըսովորին ամէնքը՝ իւրաքանչիւր տակտը (a, b, c, d) կրկնելով երկ-երկու անգամ։ Լաւ իւրացնելուց յետոյ՝ երգիչները կըբաժանուին չորս խմբի. Նախ սկսում է երգել առաջին խումբը. երբ սա հասնում է b-ին, նոյն միջոցին երկրորդ խումբն է սկսում ծայրից՝ a-ից. իբրև թէ առաջինին տեղ է անում։ Նոյն հետևողութեամբ սկսում են խմբի մէջ մտնել երրորդ և չորրորդ խմբերը. Վերջացնողն էլի սկսում է ծայրից կրկնել, մինչև խմբապետի վերջնական նշանը. Այս տեսակ զուարճալի խաղը կոչւում է կանոն, որի կատարելու ժամանակ երգչի լսողութիւնն ընտելանում է հարմոնիայի.

| | a | b | c | d |
|---|---|---|---|---|
| 1-ին ձայն | 5 5 3 1 | 7̣ 2 1 3 | 2 4 3 5 | 5̣ 7̣ 1 5̣ |
| 2-րդ » | 0 0 0 0 | 5 5 3 1 | 7̣ 2 1 3 | 2 4 3 5 |
| 3-րդ » | 0 0 0 0 | 0 0 0 0 | 5 5 3 1 | 7̣ 2 1 3 |
| 4-րդ » | 0 0 0 0 | 0 0 0 0 | 0 0 0 0 | 5 5 3 1 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 5 5 3 1 | 7̣ 2 1 3 | 2 4 3 5 | 5̣ 7̣ 1 5̣ | ձայն |
| 5̣ 7̣ 1 5̣ | 5 5 3 1 | 7̣ 2 1 3 | 2 4 3 5 | » |
| 2 4 3 5 | 5̣ 7̣ 1 5̣ | 5 5 3 1 | 7̣ 2 1 3 | » |
| 7̣ 2 1 3 | 2 4 3 5 | 5̣ 7̣ 1 5̣ | 5 5 3 1 | » |

Քառաձայն Մաժոր (ուրախ) եղանակ.

| | | | |
|---|---|---|---|
| Սոպրան | 1̇ 7 1̇ • | 1̇ 1̇ 7 1̇ • | 1̇ 2̇ 1̇ 7 1̇ • |
| Ալ'տ | 3 4 3 • | 3 4 4 3 • | 3 4 3 2 3 • |
| Տենոր | 5 5 5 • | 5 6 5 5 • | 5 6 5 5 5 • |
| Բասս | 1 5̣ 1 • | 1 4̣ 5̣ 1 • | 1 4̣ 5̣ 5̣ 1 • |



Նոյնը մինոր (տխուր) եղանակ.

| | | | |
|---|---|---|---|
| Սոպրան | 6 5 6 • | 6 6 5 6 • | 6 7 6 5 6 • |
| Ալ'տ | 3 3 3 • | 3 4 3 3 • | 3 4 3 3 3 • |
| Տենոր | 1̇ 7 1̇ • | 1̇ 7 7 1̇ • | 1̇ 2̇ 1̇ 7 1̇ • |
| Բասս | 6 3 6 • | 6 2 3 6̣ • | 6 2 3 3 6 • |

Վարժութիւններ պատարագի արարողութիւնից.

| | | |
|---|---|---|
| | p > 𝄐 | p > |
| Սոպրան | 1̇ • ⌒ 7 • 1̇ • | 3̇ • 2̇ • 1̇ • • • |
| Ալ'տ | 3 • ⌒ 2 • 3 • | 1̇ • 6 ⌒ 7 6 • • • |
| Տենոր | 5 • • • 5 • | 5̇ • 2̇ ⌒ 5̇ 3̇ • • • |
| Բասս | 1 • ⌒ 5̣ • 1 • | 1 • 4 ⌒ 5 6 • • • |
| | Ա — մէն: | Ա — մէն: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | > | | 𝄐 | | | | p |
| (1=4) | 54 3 | 4 ⌒ 6 | 5 • | 4 5 | 5 ⌒ 43 | 4 ⌒ 6 | 5 • |
| | 2 1 | 1 ⌒ •2 | 3 • | 2 3 | 1 • | 1 ⌒ •2 | 3 • |
| | 5 5 | 4 ⌒ 1̇ | 1̇ • | 1̇ 1̇ | 3 ⌒ 45 | 6 ⌒ 4 | 1̇ • |
| | 7̣ 1 | 6̣ ⌒ 4̣ | 1 • | 1 1 | 1 • | 1 • | 1 • |
| | Տէր ո | ղո | ր մեա: | Եւ ընդ | հո | գւոյդ | քում: |
| | | | | Ա ռա | ջի | քո | տէր: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | 𝄐 |
| (1=1) | 4 | 5 65 4 7 | 7 6 5 6 •5 | 4 • |
| | 4 | 3 • 4 4 | 5 4 4 ⌒ 3 | 4 • |
| | 4 | 1̇ • 6 2̇ | 2̇ 1̇ 2̇ ⌒ 1̇ | 6 • |
| | 4 | 1 • 2 7̣ | 5̣ 6̣ 7̣ ⌒ 1 | 4 • |
| | Ցի | շեա տէր և | ո ղոր մեա | — — : |



# ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔ

Գործի արագութեանը նպաստելու համար խորհուրդ ենք տալիս՝ առաջին ձայնին (սոպրան) թէ պատարագի արարողութիւնը և թէ ուրիշ երգեր սովորեցնել բերանացի, լսողութեամբ — իբրև հանրածանօթ մայր-եղանակ: Մնացեալ ձայներին սովորեցնել թուանշանական նոտերով, որի ժամանակ պէտք է աշխատել հնար եղածին չափ խուսափել վերադիր և ստորադիր կէտերից և կիսաձայներից, որպէս զի ձայնագրութեան պարզ ձև տրուի և հեշտ լինի ուսուցանելը: Այսպէս՝ ալ'տ-ի համար 1-ն ընդունել կամերտոնի ֆօ-ն և այնպէս ուսուցանել.



այս դէպքում վերոյգրեալ, օրինակ, «Տէր ողորմեա»-ն կըփոխուի այսպէս՝

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 5 | 4 | 4⌒ | •$\overline{5}$ | 6 | • | ‖ |
| Տէր | ո | ղո | ր | մեա: | | |

փոխանակ՝

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2 | 1 | 1⌒ | •$\overline{2}$ | 3 | • | ‖ |
| Տէր | ո | ղո | ր | մեա: | | |

Այս կերպ ալ'տ-ի բաժնի մէջ գրեթէ ստորնական նոտեր չեն պատահիլ, իսկ կիսաձայներ շատ քիչ (յաճախ 7), որոնք այնքան դժուարութիւն չեն պատճառիլ: Տենորի համար 1-ն ընդունել՝ ըստ կամերտոնի ֆա.

1 2 3 4 5 6 7 $\dot{1}$

ֆա սօլ' լ'ա սի դօ րէ մի ֆա

(4 5 6 7 $\dot{1}$ $\dot{2}$ $\dot{3}$ $\dot{4}$)

Այս կերպ օկտաւի կէտերից կարելի է ազատուել: Հէնց այդպէս էլ գրուած է տենորի պարտիան վերոյգրեալ «Տէր ողորմեա»-ի մէջ: Պատարագի արարողութեան մէջ տենորի պարտիայի նոտերը մի ութնեակից վէրը չեն անցնում, այդ պատճառով թուանշաններով սովորեցնելը շատ դիւրին է:

Բասս-ի համար $\underset{\cdot}{1}$-ն ընդունել ցածի ֆա. Հէնց այս գամմայով էլ գրուած է բասսի բաժինը վերոյիշեալ «Տէր ողորմեա»-ի մէջ: Բայց պայմանապէս բասսի համար և 1-ը (առանց ստորնական կէտի) կարելի է ընդունել ցածի ֆա, այսինքն տենորից մի օկտաւ ցած:

Ի հարկէ, պայմանական ընդունած այդ գամմաները գործը չեն կարող շփոթել, որովհետև իւրաքանչիւր

խումբ իւր տետրում կունենայ իրեն համար յարմարեցրած գամման, ելեւէջը *)։ Այստեղ միայն խմբապետի հմտութիւնն է հարկաւոր։ Այս ձեւով տետրիս կազմողն անցել է եւ խիստ յաջող հետեւանքի է հասել։

Արդ, եթէ ցոյց տուած ուղղութեամբ ուսուցիչը ջանքով պարապելու լինի նորուս երգիչների հետ՝ նուիրելով օրէնը մէկ ժամ փոքրերին (սօպրան, ալ՛տ) եւ մէկ ժամ էլ մեծերին (տենօր, բասս), նրա խումբն անշուշտ երկու ամսում պատրաստ կըլինի պատարագի արարողութիւնը երգելու։ Անհրաժեշտ է, որ այդ միջոցին շաբթէնը մի-երկու անգամ ընդհանուր փորձ նշանակուի։ Ի հարկէ, խանգարող երգիչներին չպէտք է թոյլ տալ եկեղեցում երգելու, միեւնոյն ժամանակ էլ՝ նրանց չպէտք է յուսահատեցնել ու նրանց աշխատանքն առ ոչինչ համարել, այլ պէտք է սիրտ տալ եւ հետեւել, մինչեւ որ նրանք էլ կըսովորեն ուղիղ երգել։

Գուցէ առարկողներ լինեն, թէ անձայնագրագէտ երգիչները չեն կարող այդպէս կարճ ժամանակամիջոցում տիրապետել երգեցողութեան գեղարուեստական նրբութիւններին, առանց որի խմբական երգեցողութիւնն անմիտ բան կըլինի, անճոռնի դուրս կըգայ։

Դա չափազանցութիւն է։

---

*) Յարմարութեան համար է, որ գծային սիստեմի (եւրոպական ձայնագրութեան) մէջ էլ ընդունուած են մի քանի տեսակ բանալի-ներ։



Մենք հօ մասնագէտներ չե՞նք պատրաստում, կամ թէ՝ արքունական թատրոնների համար օպերային խումբ չենք կազմում։ Բաւական է, որ նորուս երգիչներն իմանան եղանակները երգել ճիշտ, հանգիստ ու հանդարտ՝ հնար եղածին չափ պահպանելով ցոյց տուած կանոնները։ Իսկ ձայների տեխնիքական կառավարութիւնը, նիւ՛անսների ամենաճիշտ կատարումը՝ երկա՛ր, շատ երկար վարժութիւնների արդիւնք են։ Նորակազմ խմբից պահանջել այդ յատկութիւնները՝ այնքան տարօրինակ կըլինի, որքան եւ նոր գրել-կարդալ սովորողներից ճարտասանութիւն պահանջելը։

Ի վերջոյ, երբ երգեցիկ խմբի կազմակերպութիւնն այս կերպ գլուխ գայ եւ նրա գոյութիւնն հաստատ հիմքերի վրայ դրուի,—խմբապետի պարտքը կըլինի այնուհետեւ՝ երգիչների ձայներն աւելի կոկել, մշակել եւ նրանց սովորեցնել եւրոպական ձայնագրութիւն, որով տպուած է պ. Մ. Եկմալեանի ներդաշնակած պատարագի արարողութիւնը եւ գուցէ այսուհետեւ ուրիշներն էլ տպուին։

Անշուշտ պիտի գտնուին ազգասիրաբար տրտնջողներ, թէ՝ մեզ ի՞նչ պէտք էր թուանշանական սիստեմ, քանի որ մենք ունինք հայկական նոտեր, որոնցով կարելի է ձայնագրութեան տարրական մասն անցնել։ Ճիշտ է։ Բայց հայկական ձայնագրութիւնն ունենալով իւր յարմարութիւնները, ունի նաեւ իւր դժուարութիւնները։ Նորուս երգիչները չեն կարող ըմբռնել հայկական նոտերի ձեւերն ու ձայնաստիճանների տարբերութիւնն այնպէս հեշտ, ինչպէս թուա-

նշանական նոտերով։ Օրինակ, եթէ նորուս աշակերտին հարցնէք՝ ֆօ-ից ֆօ քանի՞ աստիճան է, նա իսկոյն չի կարող պատասխանել, նա դեռ պիտի հաշուէ ֆօ, է, վէ, ճէ, ֆօ և ապա գտնէ, թէ հինգ աստիճան է, իսկ թուանշաններով 1-ից 5 պարզ երևում է քանի աստիճան եղածը։ Թուանշաններով, մանաւանդ, պարզ երևում են օկտաւները՝ 4 $\underset{.}{4}$ | 5 $\underset{.}{5}$ | 2 $\dot{2}$ | $\dot{1}$ 1, կիսվեր-կիսվարները՝ 4 5 | 6 7 ևայլն։

Սակայն, ուր հայոց դպրոց կայ,—ասել է ուսուցանելու աւելի երկար միջոց,—այնտեղ կարելի է ձայնագրութեան ուսուցումն աւելի ընդհանրացնել, բաժանելով այն՝ երեք շրջանի։

1) Թուանշանական սիստեմ — Ա տարի,
2) Հայկական ձայնագրութիւն — Բ տարի,
3) Գծային սիստեմ — Գ տարի։

Եւ որովհետև բոլոր սիստեմների ձայնագրութեանց էութիւնը նոյնն է, այդ պատճառով էլ դրանից աշակերտին վնաս չի հասնիլ, այլ նրա առաջ ձայնագրութեան գաղտնիքը բոլորովին կըպարզուի ու նրա մտքի հորիզոնն աւելի կընդարձակուի *)։ Բացի այդ, իւրաքանչիւր դասարանից դուրս եկած աշակերտ, կեանքի մէջ մանելով՝ փոքր ի շատէ գաղափար կունենայ ձայնագրութեան մասին։

Գիտեմ, հայկական կամ եւրոպական ձայնագրու-

*) Ռուսաց մէջ էլ՝ բացի եւրոպական և թուանշանական սիստեմից, մինչև օրս տեղ-տեղ գործ է ածւում նաև кватратная система, և աւելի հին՝ крюковая система.



թեանց մէջ վարժուած ուսուցիչների համար առաջին անգամ խորթ կըթուի թուանշանական սիստեմը. սակայն, եթէ նրանք փոքր ինչ նեղութիւն կրեն և ընտելանան առաջարկածս սիստեմին, ձայնագրութեան տարրական մասը այդ ձևով սովորեցնեն նորուսներին ու տեսնեն հետևանքը, անկասկած՝ անձամբ կըհամոզուին բոլոր ասածներիս։

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ



# ՅԱՒԵԼՈՒԱԾ

## I. ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ.

Յորդոր. (1=4) | 1 | 3 3 3 3•4 | 5 5 5 43
Հայր | մեր որ յեր կինս | ես սուրբ և դի

7 6 5•4 3 | 3 3•4 5 5 | 5 6 5•4 5
ցի ա նուն քո, | և կես ցէ ար | քա յու թիւն քո,

3 3 5 43 | 2 3 4 5 | 6i̇ 7 6•5 5
և դի ցին կամք | քո՝ որ պէս յեր | կինս և յեր կրի.

f

1 3 33 4 | 5 7 6 5•4 | 3 7 7 7
զհաց մեր հանա պա | զորդ տուր մեզ այ | սօր, թող մեզ ըզ

i̇ 6 7 3 | 4 5 6 7 | i̇ 7 65 7
պար տիս մեր՝ որ | պէս և մեք թո | ղումք մե րոց պար



6 54 3 3 | i̇ 7 6 5 | 54 3 4 5
տա պա նաց, և | մի տա նիր զմեզ | ի փոր ձու թիւն,

p

i̇ 7 6 5 | 43 6 54 32 | 3 •
այլ փրր կեա ի | չա — րէ — | — —:

(Տես՝ Մ. Եկմալեանի պարտիտուրա—երես 143):

## II. ՄԱՆԿԱԿԱՆ ԱՂՕԹՔ.

ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՅԻ.

Զափաւոր.

Սօպ. | 3 • 4 5 • 5 | 5 • 6 6 • 5 | 3• 4 5 6 5
Ալ՛տ | 1 • 2 3 • 3 | 3 • 4 4 • 3 | 1• 2 3 4 3
Ա ռա ւօ տեան | թռչ նոց եր գեր | ըզ քեզ Աս տուած մեր

7 • 6 5 • • | 3 • 4 5 • 5 | 5 • 6 6 • 5
5 • 4 3 • • | 1 • 2 3 • 3 | 3 • 4 4 • 3
նը ւա զեն. | ո ղոր մու թիւն | Քո մեր վե րայ

5 4 3 4 • • | 2 • 3 4 • 6 | 5 • 4 3 • •
3 2 1 2 • • | 7̣ • 1 2 • 4 | 3 • 2 1 • •
ինչ պէս ի մարգ, | ինչ պէս ի մարգ | ցօղ իջ նայ:

Երեկոյեան մեր հառաչներ
Առ քեզ Աստուած մեր առաքեմք.
Ողորմութիւն Քո մեր վերայ
Ինչպէս ի մարգ ցօղ իջնայ:

## III. ԳԻՇԵՐԱՅԻՆ ԱՂՕԹՔ.

Դ. ԲՕՐՏՆԵԱՆՍԿՈՒ.









## IV. ՕՐՀՆԵՐԳ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ.

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ.







V. ՄԱՂԹԱՆՔ ԱՌ ՏԷՐ

(1=7) ԼՈՒԲԲԱՌԻ.




Նա յեացտըխուր ա ւն րա կաց մեր հարց ան չուք
espressivo
ըը քեալշիր մաց. ա՟խ Հայ աս-տան մայր սը գա զգեաց
p
pp
ի բեւր հա - ռաչս կո - ծէ ի լաց:




f
Ուր հայ-որ-եար տըք-նինպան դուխտ, ոհ ընդ տար վայր
բաղ մակա րոտ, չու նին պաշտ պան մեծ ի կո րուստ
ի վտանգըս կը - բեն հար ուսծսան գում: Տուր չունչ քոյն հայ






Ւ. ՀԻՄՆ ՌՈՒՍԱՑ

Maestoso.

Ա. ԼՎՈՎԻ.



## ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ

Երեք սիստեմի նոտերը.

1̣ 2̣ 3̣ 4̣ 5̣ 6̣ 7̣ | 1 2 3 4 5 6 7 | 1̇ 2̇ 3̇ 4̇ 5̇ 6̇ 7̇ 1̈



Զափերը.



Կիսաձայները.





*) Պա-ից փօ պէտք է հասկանալ ըստ եւրոպականի $1/2$ տոն: Հայկական ձայնագրութեան մէջ օրինակելի եղէջն է Փա Մաժորը, ուր արդէն պա-ից փօ ամբողջ ձայն է, իսկ պա-ից նէ — կիսաձայն:

**) Այդ ձեը հայկական ձայնագրութեան մէջ չէ ընդունուած: Այնտեղ գրւում է պա կիսվէր և կարդացւում է փօ (կիսվար):

Այդպէս են նաև միւս կիսվարները:

ՀՀ Ազգային գրադարան
NL0307476

4399